ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ՝ Տավուշի մարզի միասնական երթուղիների համար՝

Հ/Հ	ԵՐԹՈՒՂՈՒ			
	անվանումը և համարը	սկզբնակետը	վերջնակետը	սպասարկման համար պահանջվող հիմնական և պահուստային ավտոբուսների քանակը
1.	Դիլիջան-Երևան	Դիլիջան	Երևան	10
2.	Իջևան-Երևան	Իջևան	Երևան	10
3.	Բերդ-Երևան	Բերդ	Երևան	2
4.	Բագրատաշեն-Երևան	Բագրատաշեն	Երևան	2
5.	Նոյեմբերյան-Երևան	Նոյեմբերյան	Երևան	2
6.	Բերդ-Վանաձոր	Բերդ	Վանաձոր	1
7.	Բերդ-Իջևան	Բերդ	Իջևան	1
8.	Նոյեմբերյան-Իջևան	Նոյեմբերյան	Իջևան	1
9.	Դիլիջան-Իջևան	Դիլիջան	Իջևան	1
10.	Աղավնավանք-Իջևան	Աղավնավանք	Իջևան	1
11.	Բարեկամավան-Կոթի-Իջևան	Բարեկամավան	Իջևան	
				31 փաստացի + 5 պահուստային

ՑԱՆԿ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ N 2 ձևի:

2.* Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4.* Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր, գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների (սույն պահանջը չի վերաբերում համայնքներում անցկացվող մրցույթներին):

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

**Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում:*

Տավուշի մարզի երթուղիների հաստատված չվացուցակներին կարելի է ծանոթանալ https://api.mtad.am//storage/pages/files/2023/01/pdf/31_10-53-sc789-63d8bb02e7260.pdf հղումով:

Փաթեթների բացման օրը, ժամը և վայրը՝ 2025 թվականի մայիսի 22, ժամը 11:00, ք.Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ 2025 թվականի մայիսի 30, ժամը 11:00, Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնք, Երևան-Սևան ավտոմայրուղի, 2/14 շենք

Հայտը ներկայացնելու օրը, ժամը, վայրը և վերջնաժամկետը՝ 2025 թվականի մայիսի 23, մինչև 17:00, ք.Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար՝ 010511356

Էլեկտրոնային փոստի հասցեն՝ mtai.secretariat@gmail.com

Մրցույթին ներկայացվող ավտոբուսների ընդհանուր թվի առնվազն

10%-ը պետք է հարմարեցված լինեն հաշմանդամների (տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց) նստեցման և իջեցման համար:

Մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների համաձայն:

Հայտ-պարտավորագրով մասնակցելու դեպքում Կարգի 22.1 կետի պահանջներին համապատասխան անհրաժեշտ է մրցույթին հայտ ներկայացրած կազմակերպության հաշվեհամարից Հ/Հ 900008000730 հաշվեհամարին մինչև 2025 թվականի մայիսի 26 ժամը 12:00 փոխանցել սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք գումար: